

ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍԻ. ԿԵԱՆՔԻ ԵՒ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

17րդ դարի Իրանի նշանաւոր արուեստագէտների եւ առհասարակ սեֆէփեան շրջանի որմնանկարների պատմութիւնն ուսումնասիրող գեղարուեստագէտ պատմաբանն անպայման պիտի կանգ առնէ մի խոշոր հայ նկարչի կեանքի եւ ստեղծագործութիւնների վրայ: Դա Նոր-Ջուղայեցի նկարիչ Մինաս վելիլանան է, որի կեանքի եւ նկարչական գործունէութեան հիմնական զծերը, հայ նկարչական զբոսականութեան պատմութեան մէջ, մինչեւ օրս էլ դեռ հարազատութեամբ ու պատմական տուեալներով չեն լուսարանուած: Աւելի քննարկելի է, որ տաղանդաւոր նկարչի մասին արտայայտուող մի քանի հայ բանասէրներ եւ մտաւորականներ — Հ. Ն. Անդրիկեան, Լէօ, Ջօրայի Միրզայեան — առանց տեսնելու Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի եւ հայ հին ապարանքների որմնանկարները*), ստակ ուրիշների կարծիքների վրայ յենուելով, արձանագրել են անհիմ եւ երբեմն էլ իրար հակասող տեսակէտներ: Դա մի երեւոյթ է, որը չի դիմանում որ եւ է քննադատութեան: Գեղարուեստական գրականութիւնը պահանջում է փաստական աղբիւրներ, իսկ երբ տուեալները չեն բխում աւտրիկայական վերլուծութիւնից, ապա չեն կարող գիտական արժէք ներկայացնել: Այդ տեսակէտից ահա նկարիչ Մինասի որմնանկարներին նուիրուած բանա-

սիրական գրականութեան էջերը ո՛չ միայն համոզիչ չեն, այլ եւ լի են հակասութիւններով:

Բ. ԽՆՉ ՌԵՂԻՈՎ ՀՆԱՐԱԽՈՐ Է ՌՐՈՇԵԼ ՄԻՆԱՍԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

17րդ դարի պատմագիր՝ Առաքել Դարբ-ժեցու նկարիչ Մինասին վերագրած մի շարք նկարները, Ջրաղ խանը, Բազէն ու քազէն — կիրը, խոջա Սափրագենց ապարանքի որմնանկարները եւ այլ ստեղծագործութիւններ, տաւաբախտաբար, զոհ են դնացել ժամանակի աւերող ու կլանող ժանիքներին: Մնացել են միայն նկարչի ապրած ժամանակաշրջանում նրկարուած Նոր-Ջուղայի պատմական ապարանքների որմնանկարները, որոնցից մի քանիսը, իրենց ուրոյն գծագրութեամբ, նկարչական առանձին արժէք են ներկայացնում: Դրանցից առանձնապէս պիտի յիշատակել Շահ-Աբբաս Բ-ի պատմաշրջանում կառուցուած խոջա Պետրոսենց եւ խոջա Սալփաւանենց ապարանքները որմնանկարները, որոնք անպայման կարեւոր աղբիւրներ են եւ որոնց գոյների ու ոճերի համեմատական վերլուծութեամբ էլ թեւեւ հնարաւոր լինի պարզաբանել տաղանդաւոր նկարչի դպրոցը եւ նրա արուեստի ոճը:

Ոմանք նկարիչ Մինասի վրձինին են վերագրում նաեւ Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի թանգարանում գտնուած կաշուի, փայտի եւ թիթեղի վրայ գծուած նկարները: Այդ մասին, սակայն, որոշակի մատնանշող մի փաստական արձանագրութիւն գոյութիւն չունի եւ առ այժմ վերապահութեամբ պիտի ընդունել:

*) Միայն Պ. Միրզայեանը տեսել է վանքի նկարները:

Գ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՊԱՏԿԻՐԸ

Նկարիչ Մինասի կեանքի հիմնական գծերը պատմական լուսով լուսաբանելու եւ հաստատուն պատուանդանի վրայ կառուցելու համար այստեղ համառոտակի գծենք այն ժամանակաշրջանի պատկերը, որի մէջ խոշոր արուեստագէտն ապրել է եւ ստեղծագործել:

Քաղաքի թաղամասերում կառուցած իրենց տրւերը եւ փոխադրուել Ջայէնդերուտ գետի միւս ափը: Սակայն դա մի պատահական երեւոյթ էր, այլ ունէր իր հիմնական դրգապատճառը: Արքան իր թագաւորութեան շրջանում խստիւ արգիւրում է գինեվաճառութիւնը, բայց նրա հրամանը չի կարողանում կատարելու հարած-



Նոր-Ջուզայի Ամենափրկչեան վանքի տաճարի զարդանկարներից
եւ ծաղկանկարներից (17րդ դար):

Մինասի նկարչական գործունէութիւնն ըստ իր 1630 թուականից: Դա այն պատճառով է, որ 1692-ին իրանի զահէ վրայ բաղմունի էր նրա 14 տարեկան թոռը՝ Շահ Սէֆին, որ թագաւորեց ամբողջ տասն եւ մէկ տարի: Այդ շրջանում Նոր-Ջուզայի Հայերն ապրում են համեմատաբար խաղաղ եւ հանգիստ պայմաններում: Շահ Սէֆին մահից յետոյ, 1641-2 թուականին, իրանի զահէ ժառանգում է նրա որդին՝ Շահ-Աբբաս երկրորդը, որի օրով ընկալանում, իրանի հին մայրաքաղաքում, տեղի է ունենում պատմական մի խոշոր դէպք, որը Նոր-Ջուզայի պատմութեան մէջ առանձնաշատուկ տեղ է զբաղում: Իմանք այդ պատմութեան ճշերը: Շահն առանձին հրովարտական ձայներին հրամայում է՝ թողնել Սպահան

ների թիւը: Այդ հանգամանքը, ահա, օգտագործում են Հայերի հարեւան այլազգիները: Նրանք Շահին բացատրում են, թէ Հայերը գինեւէր ժողովուրդ են եւ փաստորէն նրանք են զաղտնի գինի ու օղի վաճառողները: Ընդգծում են նաեւ մի այլ երեւոյթ, թէ քանի Հայերն ապրեն Սպահանում, ապա անհնար կը լինի արգելիլ գինեվաճառութիւնը: Բայց Շահին է՛լ աւելի տրամադրելու համար պատճառաբանում են, թէ Հայերը գինի եւ օղի քաշելուց յետոյ մնացած մրուրը թափում են ջրի մէջ, իսկ իրենց կարասները մի քանի օր դնում են առուների մէջ եւ այդպիսով հարածում խմելու: Ահա այդ բոլոր երեւոյթներին վերջ տալու նպատակով՝ Շահն ու նախարարները Հայերին հրահանգում են փոխադրուել գետի միւս ափը: Բնորոշ է եւ այն, որ Հայերի բնակու-



Յիսուսի Միքսուսիներ
Նոր-Ջուլայի Ամենափրկչեան վանքի
տաճարի որմնանկարներից (17րդ դար)

Թեան համար տրամադրում են միանգամայն ձրի եւ ընդարձակ հողամասեր։ Եւ ահա, 1650 թուականին, Սպահանի Շամշարադում բնակւող դաշտեցի Հայերն իրենց սեփական տները լքելով, անցնում են Շահի տրամադրած Մամուրանի հողամասերի վրայ եւ հիմքը դնում Նոր-Ջուլայի արուարձանին։ Շուտով Շամշարադցիներին միանում են Երեւանցի եւ Շխսպանցի Հայերը եւ էլ աւելի ընդարձակում Նոր-Ջուլան։ Ուշագրաւ է եւ այն, որ Նոր-Ջուլայիցի Հայերից շատերը կառուցանել են տալիս կամարակապ փողոցներ, բարձրաբերձ, լայնահաստ, թեւաւոր եւ արքայական ապարանքներ, ամառատուն հովանոցներ, որոնց պատերը զարդարում են ոսկենկար եւ ծաղկազարդ նուրբ նշաններով։ Ահա այդ նկարներից շատերը մինչեւ այսօր էլ դեռ իշխում են Նոր-Ջուլայում։ Բայց այդ մասին լսենք ականատես պատմադրի՝ Առաքել Դաւրիթեցու վկայութիւնը.


« Ելինցին յարկա եւ քնակութիւն ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, քեւաւոր ապարածօք, եւ ամառատուն հովանոցօք, բարձրաբերձ եւ արքայակերպ շինուածօք, զարդարեալ եւ յօրինեալ ի ծաղիկս ոսկւայ ի լաջվարդի՝ եւ պէտպէս երւմեացս ակնախտիդ տեսողաց »։

Նոր-Ջուլայում շինարարական աշխատանքներն ստալ են տարւում առանձին թափով եւ

ահա արուարձանն է՛լ աւելի գեղեցկանում էերբ հիմնում են ճարտարապետական ուրոյն ոճով եւ նկարազարդ եկեղեցիներ, վանքեր ու իջեւաններ։ Առաքել Դաւրիթեցին այսպէս է պծում ժողովրդի ստեղծագործական աշխատանքի պատկերը.

« Սոյնպէս շինցին եւ գեկեցինս հրաշազան յօրինուածովք ըստ արժանոյն փառացի Աստուծոյ, երկնամեմն խորանօք, եւ գերամբարձ կաթողիկէիւք, բովանդակ ծաղիկեալ պէտպէս երանգովք ոսկւով եւ լաջվարդով, տնօրինականօք Տեստն եւ պատկերովք սրբոցս։

Այդ պատմական եկեղեցիներից այսօր նկարչական առանձին արժէք են ներկայացնում Ամենափրկչեան Վանքի տաճարի ու Բեթղէհէմ եկեղեցու որոշ որմնանկարները եւ մանաւանդ ոսկեզօծ ծաղկանկարներն ու զարդանկարները, որոնք դրաւում են ձեզ իրենց գոյներն ու գծերի աննման ներդաշնակութեամբ։ Սրանք երււոյթներ են, որոնք զաղափար են տալիս Նոր-Ջուլայի Հայերի ո՛չ միայն գեղարուեստական ճաշակի, այլ եւ տնտեսական վերելքի մասին։ Եւ դա մի պատմական ու անմիտելի իրողութիւն է։ Ահա այդ ժամանակաշրջանում է, որ առանձնապէս ծաղկում է Իրանի վաճառականութիւնը։ Նոր-Ջուլայիցի հմուտ, փորձու, ճկուն եւ նախաձեռնող խոջա վաճառականներն, արդիւնաբերական ծրարիներով, Նոր-Ջուլայից անցնում են Հնդկաստան, Իտալիա եւ վաճառելով իրենց հետ տարած թանկագին գոհարեղէնները, այժմսներն ու կերպասները, մեծամեծ զոււարթներով վերադառնում են Իրան։ Արձաճարդները եւ այն, որ խոջա հայ վաճառականներն Իտալիայում առեւտրական գործերով չլքելիս տեսնում են նկարազարդ հոյակապ պալատներ, եկեղեցիներ եւ ապարանքներ, որոնք իրենց նկարչական – ճարտարապետական ոճով եւ գեղեցկութեամբ խոր տպաւորութիւն են գործում նրանց վրայ։ Այդ միջավայրում էլ նրանք ծրարում են՝ նկարազարդել նաեւ Նոր-Ջուլայի իրենց ապարանքները։ Ո՛չ մի կասկած, որ երբ խոջաները վերադառնում են իրենց ծննդավայրը, հրաւիրում են ժամանակի տաղանդաւոր նկարիչ Միշասին, որպէս զի նրկարէ իրենց ապարանքները։



Գրիգոր Լուսավորչի չարչարանքները
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնանկարներից (17րդ դար)


Նշենք եւ այն, որ այդ պատմաշրջանում Նոր-Ջուղայի Հայերը վայելում են լայն ինքնավարութիւն: Հայ հասարակական կեանքը վարում են զլիարարապէս խոջա Սարփրագեանները: Հէնց Շահ-Աբրահաի հրամանով Նոր-Ջուղայի առաջին իշխանապետ եւ Ժողովրդի կառավարիչ, Նշանակում են խոջա Սարփար եւ խոջա Նազար եղբայրները: Դրանք որդիներն են Հին-Ջուղայում անսահման հարստութեան ու փառքամութեան մէջ ապրող եւ Ժողովրդի մէջ բացառիկ դիրք ու խոշոր ազդեցութիւն ունեցող վաճառական խոջա իսաղիկ, որի ապարանքում Շահ-Աբրահա առաջինը հիւրանիւրում է եւ նրաէր ստանում ոսկեայ մատուցարանում լրջւած ոսկիները: Այս մասին Առաքել Դարբին-

ցու պատմութեան 24-րդ էջում կարդում ենք հետեւեալ տողերը.

« ... Եւ ի գալն յարժամ հասին ի գիւղաքաղաքն Ջուղայ, ամենայն բնակիչքն Ջուղայու բազում եւ զանազան եւ պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հոգացեալ էին ընդ առաջ Շահին, որպէս վայել է քաղաւորին: Իշխանք եւ ծերք, եւ երիտաւարք... եւ նորարողքսք դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ եւ ագնի գինի մատուցանէին: Լաւցեայ մամեղինօք եւ խնօք եւ կնդրկօք բաժնայք եւ մարմնաւոր երգեցիկք առաջի բնականով յարմարական ձայնիւ նուագէին: Եւ գեմնապարես անցից արքայի գարդարեցին. եւ յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս հօջայ իս-

չիկին արկին փայանդագ առաքուր քազաւորին, պատուական եւ վայելուչ կումայս, որոց վերայ էանց քազաւորն եւ գնաց ի տուն հօջայ հաշիկին: Եւ ի տան անդր, խօջայ հաշիկն ոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի քազաւորին, նոյնպէս եւ անմնայն մեծամեծք Զուգայու մատուցին ընծայ, որպէս վայել է քազաւորին:

Եւ որդւոց սոցին, Մէլիք աղայ, եւ Սուլթանուս, եւ Սափրագ: Եւ հանապաղ ինքն Շահն գայր ի տունն նոցա, ուստր եւ ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա առանց խորելոյ, որպէս սովորութիւն է Պարսից աննի խորութիւն ընդ քրիստոնէից. այլ եւ ինքն Շահն կոչէր գնոսս ի տուն եւ ի սեղան իւր, եւ պատուէր ընդ մեծամեծս իւր. այլ եւ պատուիրեալ էր իւրոց նա-



Յիսուս եւ Սամարացի կիներ ջրհորի մօտ
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնակարներէից (17րդ դար)

Այդ աւանդական սովորութիւնը տեսնում ենք նաեւ Սպահանում եւ Նոր-Ջուղայում: Թէ՛ Շահ-Աբբաս Մեծը եւ Թէ՛ Հետադայ արքաները յաճախ այցելում են Հայ խոջաների ազարանները եւ վայելում նրանց Հիւրասիրութիւնը եւ միաժամանակ ստանում Թանկագին նուէրներ: Այդ հանդամանքը վկայում է նաեւ Դաւրիժեցիին՝ իր գրքի 64-65րդ երեսում: Ահա նրա արձանագրութիւնը.

«...Շահաբաս անկէր սէր ընդ ազգին Հայաց՝ եւ մեծարանս նոցա. եւ մամուսանդ ընդ Զուղայեցւոց, որոց գլխաւորի անունն էր խօջայ Սափար, եւ արինն եղբօրն՝ հօջայ Նազար

խարարաց նոյնպէս աննի»:

Այս հանդամանքն էլ ընդգծում է արքաների Հայ ժողովրդի հանդէպ տաժաժ համակրանքն ու բարեսացկամ վերաբերմունքը: Շեշտենք եւ այն, որ արքաները զխաւորայէս այցելում են Նոր-Ջուղայի լայնարձակ պողոտայի արեւմտեան ծայրում կառուցուած խօջա Նազարի ապարանքը, որի անունով էլ այդ փողոցը մինչեւ օրս կոչւում է ճՆազարի խեւանան:

Ողջա Նազարի մահից յետոյ Նոր-Ջուղայի իշխանացեա (քալանիթար) է նշանակւում նրա որդին՝ Ողջա Սարֆրազը (Շաֆուազ), որին Շահ - Աբբաս Բ-ը, իր Թազաւորութեան առ-

թիւ, մի հրովարտակով արժանացնում է արքայական բարձր պատուի եւ նուիրում մի դառկապայ եւ մի վերարկու: Հրովարտակը, որ դրուած է 1052 թուականին, այժմ գտնուում է Ս. Ամենափրկչեան Վանքի Մատենադարան-թանգարանում:

Այնուհետեւ Շահն, իր նախարարների եւ մեծամեծների հետ, երբեմն հիւր է գնում Սոջայի ապարանքը: Առատաձեռն Սոջան միշտ էլ մեծահանդէս եւ արքայավայել պատիւներով հիւրասիրում է Շահին եւ նրա պալատականներին, իսկ հացկերոյթից յետոյ արքայի զօրքերին է ընծայում ճաշանդանի արծաթեղէն խրերն ու զարդարանքները: Թերեւս դրանով էլ պիտի բացատրել, որ Սոջա Սարփրազի անսահման հաջատութեան եւ առատաձեռնութեան մասին հիւստած են մի քանի աւանդական պատ-ժութիւններ, որոնք մինչեւ այսօր էլ դեռ շրջում են Նոր-Ջուղայի հայ ժողովրդի շրթների վրայ: Այդ պատմութիւններից մէկը նուիրում է Շահ-Աբբաս երկրորդին: Ահա այդ էջը: Մի գեղեցիկ օր Շահն իր պալատականների հետ

իջնում է Ջայնդերուտ գետի ափը եւ բարձրանում Մարնունի կամուրջի վրայ: Արքայական խմբում է նաեւ Սոջա Սարփրազը: Արքային պատուելու համար նա գետի ջուրը (թերեւս ամբան, երբ գետի ջուրը պակասում է) կապել է տալիս արծաթէ շահի դրամներով, ապա ամբողջ գումարը բաժանում արքայի սպասաւորներին: Այդ դէպքից մինչեւ օրս էլ կամուրջը կոչւում է «Շափռազի կամուրջ»: Թէ ո՞րքան ճիշդ են յիշեալ աւանդութեան հիմք կաղճոյ փաստերը, դժուարանում ենք որ եւ է կարծիք յայտնել, սակայն մի հանգամանք պարզ է, որ Սոջան ունեցել է խոշոր ազդեցութիւն, մեծ հմայք եւ համբաւ: Ուշագրաւ է եւ այն, որ Սոջայի անձնական հարստութեան համբաւն ու հռչակը տարածւում է ո՛չ միայն Իրանում, այլ եւ Եւրոպայում, ուր նա երբեմն այցելում է իր վաճառականական գործերով: Վենետիկում ասպագրուած «Յիսուս Որդի» գրքի յիշատակարանում նրա մասին կարդում ենք այսպիսի տողեր.

... Այլ եւ պատմաւ աշխատանաց մերոց



Գրիգոր Լուսավորչի չարչարանքները
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնանկարներից
վերելը ոսկեմկար, մերժելը յախճապակեայ գարդանկար. (17րդ դար)



Կանայի Հարսանիքը. — Յիսուս ծովի վրայ
Նոր-Ջուլայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնակարներից (17րդ դար)

այս էր, որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր եւ բարեկամութիւն հետ ազգին Հայոց. եւ յարածամ ցանկայի տեսանել զշեղաշուփ իշխանն Հայոց հօջայ Սափրագն, որ ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ, զի փոխեալ էր առ Աստուած, զմտնաւ որդին իւր զհօջայ վարդանն Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ» (Հովան Լատինացի) :

Ոջայ Սափրագենց համբաւի մասին անսահման զովասանքով է խօսուած նաեւ, 1658 թուականին լոյս տեսած Աստուածաշնչի յիշատակաբանում, Յովհաննու Վանքի վանահայր՝ Զաքարիա Վաղարշապատցին: Ահա մի քանի տող նրա վկայութիւնից.

«Բայց հռչակաւորն յայնժամ եւ յայժմուս ի մէջ Ջուլայեցոցն, Շահի հասնեց խոճա հաշիկի որդիքն էին, երեւելիք, փառաւորք, մեծաշուք եւ մեծանանդեւ արքայաւանդիս մասնակիսն թագաւորին Պարսից, համբուպանքն, համփիսպայն, մեծի Շահապասին եւ յորեքըրդակից յաւենայն իրազգութիւնս, խոճա Սափարն աւել եւ խոճա Նազարն բազմաբախտքընդ տասին եւ որդիք խոճա Սափարին» պարոն եւ նազեիկ Մէլիք աղայն, ազօթաւէր սպարոն Ֆոռանգիգիւն, պարոն Սուլթանուն, պարոն Զալայն, եւ աստուածատունկ հարազատածին որդիքն խոճա Նազարին... աստուածպաշտութեան մեծահաւատն խոճայից խոճա Սափրագին» որ ամբողջութեամբ վարուց եւ արդարութեամբ հոգւոյ կենցաղավարութեան գաւորեալս, եւ ի ծայրըս ծերութեան ժամանեալ՝ փոխեցեալ եղել ի գունդ սրբոց ընտրելոց եւ իշխանացն բարե-

պաշտից, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի» :

1676 թուականին (Հայոց 1125+551) վախճանուած է Ոջայ Սափրագը եւ թաղուած Նոր-Ջուլայի Հայոց գերեզմանատանը: Նրա տապանաքարի վրայ քանդակուած են հետեւեալ տողերը.

«Ա՛ իմ անմահ հօջա որ էիր Հայոց թագա՛ որ, Անուտ Սափրագ կոչի՛» արմբաց գորեղ դատաւոր.
հելօք, քո ճարտար լեզվէտ զարմանար ամեն թագաւոր,
Շատ իշխան քո տեսուտ փափագ, անկղտուս իշխան փառաւոր :

Քո ամէ Մեծ, որ չկէր յաշխարհս քեզ նմանաւոր, ճշմարիտ էր քո խօսքը որ առնիր զբան հոգեւոր. իմեար էիր օրինաց հաւապագ դու ազօթաւոր, Թողիր անցաւոր աշխարհս երաւիրեցար առ Տէրն երկնաւոր :

Թվին Ռ եւ Ին :

Ահա այս նշանաւոր Ոջայ Սափրագենց ապարանքի որմերը նկարագրողէլ է նկարիչ Մինասը եւ էր հմուտ վրձինով գրաւել Շահի եւ նախարարների ուշադրութիւնը: Դա մի անժխտելի փաստ է: Այդ մասին մեր պնդումները հաստատուած ենք հէնց այն տուեալներով, որ Առաքել Դաւրթեցին իր պատմութեան մէջ մատնանշում է: Ո՛չ մի կսկսած, որ եթէ պատմագիրը այդ թանկագին որմնակարներն անձամբ տեսած չլինէր, չէր կարող նրանց մասին իր պատմութեան մէջ որ եւ է յիշատակութիւն կամ մատնանշում անել: Այսօր Նոր-Ջուլա-

յում, տարաբախտաբար, միայն ապարանքի աւերակներն են մնացել եւ նկարչի վրձինից չբխալ որ եւ է յիշատակադիր: Մնացել են միայն Դաւրիժեցու արձանագրութեան էջերը:

Դ. ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍԻ ԿԵԱՆՔԻ ԼԻՄԵՆԱԿԱՆ
ԳԾԵՐԸ

Անյայտութեան մէջ մնացած 17րդ դարի այս տաղանդաւոր հայ նկարչի կեանքի էական գծերի մասին, դժբախտաբար, չունենք հա-

թեան չրջանն անցնում է հէնց նահապետական Զուղայում, խոջա վաճառականների գործունէութեան փայլուն ժամանակաշրջանում, ուր նա ականատես է լինում Նոր-Զուղայում հիմնւող եկեղեցիների, մենատառների, ապարանքների, վաճառատների եւ իջևանների կառուցմանը: Շինարարական աշխատանքներն առանձին տպաւորութիւն են գործում նրա հոգու վրայ: Նրա վրայ խոր ազդեցութիւն են անում նաեւ Սպահանի բնութեան գեղեցիկ տեսարանները, Զայէնդերուտ գետն իր Ալլահվէրդի



Գրիգոր Լուսաւորչի չարչարանքները.

Նոր-Զուղայի Ամեճափրկչեան վանքի տաճարի որմնանկարներից (17րդ դար)

լուստ տեղեկութիւններ: Սեղմ էջեր կարգում ենք միայն Առաքել Դաւրիժեցու պատմութեան մէջ *): Պատմագիրը վկայում է, որ նկարիչ Մինասը ծնուել է Նոր-Զուղայում եւ թերեւս 1610 թուականին: Ահա նրա սողերը.

«... վարպետ Մինաս եւ վարպետ Յակոբ-ջան են աւագ երկուքեան ի ցեղէն Զուղանցւոց»: Նկարչի մանկութեան եւ պատանեկու-

ճարտարապետական հոյակապ կամուրջով, անհման Զարաղը, յախճապակեայ եւ նկարազարդ հրաշալեղ մզկիթները՝ իրենց գոյնզգոյն եւ ծաղկանկար գմբէթներով եւ այլ գեղարուեստական կոթողներ: Այդ միջավայրում էլ նրա մէջ զարթնում է նկարչութեան սէրը: Այնուհետեւ նա արուեստի սիրով անցնում է «խաղաղն Բէրիա» (Հալէպ ~ Սուրիա), ուր մի Քրանաացի վարպետ արուեստագէտի (պատկերահանի) մօտ սովորում է «արուեստ պատկերահանութեան եւ ծաղկարարութեան»: Պատ-

*) Տես «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ» էջ 409, 1897 թ., վաղարշապատ:


կերահան արուեստագէտը շուտով զարթեցնում է նրա մէջ թաքնուած նկարչական փայլուն ձիրքը, ներաշնչում նրա զեղարուեստական ճաշակը եւ հիմնովին փոխում նրա արուեստի մասին ունեցած սահմանափակ հասկացողութիւնը: Մինասի ուսանողական շրջանի մասին Դաւրիճեցին վկայում է այսպէս.

«Այս վարպետ Մինաս ստացաւ իւր արուեստ պատկերահամութեան եւ ծաղկարարութեան ... ի քաղաքն Բերիայ որ է Հալապ. եւ անշ եգիտ գայր ըմն պատկերառեան վարպետ, որ էր ազգաւ Փռանկ, աշակերտեցաւ փռանկ վարպետին եւ ուսաւ ի նմանէ»:

Թէ Մինասը քանի՞ տարի է ուսանում արուեստագէտ Փռանկի մօտ, յայտնի չէ: Միայն այսքանը պարզ է, որ «եւ յետ ուսանելոյն՝ ինքնազուլիս եղեւ»: Բնորոշ է եւ այն, որ նա իր ուսանողութեան շրջանում սովորում է նաեւ ուրիշ արուեստներ. խորպէս հմտանում է ախտաբանական գիտութեան մէջ, սովորում է զեղազօրծութիւն եւ նոյն իսկ վիրարութիւն:

Թեան սպեղանիներ պատրաստելու կերպը, Նոյնպէս խորանում է բժշկական գիտութեան մէջ եւ այնքան է մասնագիտանում, որ բժշկից աւելի է հասկանում հիւանդութեան հիմնական պատճառները: Մանօթանում է նաեւ մարդակազմութեան հետ: Այդ բոլոր գիտութիւնները նպաստում են նրա նկարչական արուեստի զարգացմանն ու կատարելագործմանը: Երեւոյթներ, որոնց շնորհիւ էլ նա շուտով մեծ հռչակ է ձեռք բերում: Այնուհետեւ նրան տեսնում ենք իր ծննդավայրում — Նոր-Ջուղայում, ուր նա սկսում զբաղւում է պատկերահանութեամբ, բայց շուտով ամբողջապէս նուիրում է նկարչութեան: Ուշագրաւ է եւ այն, որ ամէն կողմից հրաւիրում են նրան նկարադարձելու խոջաների եւ իշխանների ապարանքները: Բայց այդ մասին թող վկայէ ականատես Դաւրիճեցին.

«...եւ եկեալ ի քաղաքն Ասպահան բնակեցաւ ի տանն իւրում, որ էր ի մէջ Ջուղայեցոց.



Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի
յախնապակեայ զարդանկարներից եւ ծաղկանկարներից (17րդ դար):

ել գործեր գարուեստն իւր գպատկերանամութեան: Եւ վասն կարի առանկ վայելչակերտ գեղեցկատիպ չմնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Զուգայցեաց տանէին ի ծաղկել եւ ի պատկերագրել գլորկս ապարանից եւ տանց խրեանց. այսպէս եւ իտպա Նազարի որդի իտպա Սափրագն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել գապարանս իւր ծաղկօք եւ պատկերօք:

Արուեստագէտը նոր էր աւարտել իր շատ փորձաւոր ապարանքը եւ ահա Շահն չիւր է գալիս իր իշխանին: Պատերի վրայ վրձնիւած գեղարուեստական նուրբ նկարները դարուած են արքայի ուղարկութիւնը եւ նա արտայայտում է իր հիացմունքը, որովհետեւ՝

«Տեսա՞նէր զի չէնաղ եւ գեղապանն եւ յոյժ մնամակի կերպագրեալքն էին»:

Շահն հրամանով կանչում են նկարչին: Նրա վրձնի հմտութեան մասին աւելի ցայտուն գաղափար կազմելու եւ միաժամանակ սեղանակիցներին դուարնացնելու համար՝ արքան հրամայում է նկարչին՝ նկարել սեղանակից նախարարներից Զրադ խանին, որ արքունիքում յայտնի էր իր չափազանց աղել գիժաճով, ինչպէս վկայում է ակնատես պատմագիրը. «ՅՈՒժ անդեղ եւ դժպատեհ էր»:

Նկարիչը վերցնում է վրձնի ու գոյները եւ սկսում է նկարել. բայց իմանք նախագալով որ ծիծաղի եւ կատակների առարկայ պիտի հանդիսանայ, դէմքը չարունակ ծամածուռ է, որպէսզի նկարիչը չկարողանայ իրեն հարադատութեամբ նկարել: Դարեւիժեցին այդ դէպքը նկարագրում է սեղծ տողերով.

«Ակառա թեմմեշիլ զայս եւ գրեքանն, եւ այլայլել գկերպարանն եւ շրջմբիլ կողմի կողմն, զի թիւիւս պատկերն ոչ իցել ամենեւին համամանն»:

Այդ հանգամանքը, սակայն, նկարչին աւելի հնարաւորութիւն է տալիս ուսումնասիրելու Զրադ խանի դէմքի արտայայտութեան ուրույն գծերը եւ նա կարճ ժամանակում Շահնին յանձնում է անման մի ծաղրանկար, ու յնքան ընկան եւ կենդանի, «այնքան յար եւ նման համեմատութեամբ, որ ընդ թագաւորին ամենեքեան ի հանդիսին եղեալքն, մեծաւ հիացմամբ դարձանցալ եղեն վասն առուել նմանու-

թեան»: Եւ ահա ստեղծուած է մի ջերմ մթնոլորտ. զարմունքը, հիացմունքը, գոգնատենքը, ծիծաղն ու կատակները միմեանց են ներգաղանկում եւ նկարչի ճակատը զարդարում մի ծաղկեպսակով: Այդ օրից էլ Մինասը դառնում է Շահնի եւ նախարարների նկարիչը: Դարեւիժեցին նկարչի հուշակի մասին արձանագործում է այսպէս.

«... Եւ յայնմ օրէ եւ առ յայայ քաջաւորն եւ նախարարսքն իւր ոչ թողին գնալ ի ձեռաց, այլ համապագ ի տունս խրեանց պստէին վասն նկարարկերտութեան»:

Բայց մի հանգամանք է՛լ աւելի բարձրացնում է եւ հուշարում Մինասի նկարչական համբաւը: Այդ պատճառը նուազ կայրը, իբրեւ խաղաղութեան նշանակ, Շահն, բազմաթիւ թանկագին նուէրների հետ, ուղարկում է նաեւ մի թագէ եւ նրան պահող մի ոռոս սպասաւոր: Շահն թուշունն ու յնքան է դիւր գալիս, որ նա իր պալատական յայտնի նաղաշ Մահադ Բէկին եւ նկարիչ Մինասին հրահանգում է թուշունին եւ սպասաւորին նկարել չորպէս եւ են»: Առաջնուէրները շահում է Մինասը: Նա ու յնքան նման է նկարում, «այնքան համեմատ» որ թագաւորն ինքն եւ ամենայն նախարարքն իւր անպատեղի հիացմամբ սքանչացեալք, դարձանցալք կային ի վերայ նորա: Այդ առիթով էլ Շահն պարգևատրում է Մինասին տասներկու թուման փող, մի ձեռք խլաթ (պատուի զգեստ) եւ թագաւորական զինուորի արտոյոս, որի շնորհիւ էլ նրան արքունական զանձարանից յատկացւում է տարեկան թուշակ: Այնուհետեւ նկարիչը նորից անցնում է Նոր-Ջուղա եւ նուիրում իր սիրած արուեստին: Թէ նա Նոր-Ջուղայի ո՞ր թաղամասում է բնակում եւ ո՞ւր է գտնուում նրա բնակարանը, յայտնի չէ, որովհետեւ Առաքել Դարեւիժեցին այդ մասին որ եւ է յիշատակութիւն չի անում: Սակայն մի կարեւոր արձանագրութիւն լուսարանում է կենսագրական մի քանի էական գծեր: Դա իր Պետրոսեց ապագանքի նկարագրող սենեակում քանդակուած ոսկեղօծ արձանագրութիւնն է, որից պարզւում է, որ նկարչին ամուսնացել է Նոր-Ջուղայում եւ ունեցել է Մատթէոս անունով մի որդի: Ահա արձանագրութեան վկայութիւնը.

«... Ձեռամբ մեղաւոր Մաթէոսին, որ է որդի պրն. Միմասին»:

Մատթէոսը եւս օտուած է լինում նկարչական ձիրքով եւ վերանորոգում է իր հօր զրծած եւ աւերուած նկարները: Բայց արձանագրութեան ամենաուշագրաւ կէտն այն է, որ պարզում է նկարչի ազգանունը: Այնտեղ կարդում ենք.

«... Յիշել զՄաթէոսն եւ զծնողոյն իւր եւ պապն իւր հեգաեոզի եւ՝ ռդարմած իոյնա Պետրոս»:

Ե. ՆԿԱՐԻԶ ՄԻՆԱՍԻ ՆՊԱՐՆԵՐԻ ՄՕՏԱՌՈՐ

ՅՈՒՑԱԿԸ

Տաղանդաւոր նկարչի մի քանի ստեղծագործութիւնների մասին հաստատուն կուտան ունենք Աւագել Դաւրիժեցու տուեալները: Պատմապիբը պիտաւորապէս կանդ է առել իր տեսած խոյա Սարփրագենց ապարանքի որմնանկարները Վրայ եւ միաժամանակ նկարչի մասին արտայայտուել է առանձին հիացմունքով:



Գրիգոր Լուսաւորչի տեսիլը եջմիածնի մասին եւ Տրդատի դարձր Լուսաւորչի ձեռքով. Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի սահարի որմնանկարներից (17րդ դար) վերելը՝ ոսկեգօծ, ներքելը՝ յախնապ ալիւայ գարդանկար. (17րդ դար):

խոյա Պետրոսի ազգանունն է Վէլիջանեանց: Ուրեմն, Մինասի ազգանունը, որ մինչեւ օրս այնպաւ էր, արձանագրութեան վկայութեան համաձայն, պիտի ընդունել Վէլիջանեանց:

Թէ ե՞րբ եւ ո՞ւր է վախճանուել նկարչիչը՝ յայտնի չէ. եթէ նա ապրել է մինչեւ ութսուն տարեկան հասակը, այդ դէպքում վախճանուել է 1689: Թուականին: Հակառակ մեր կրկնակի դիմումներին, զժախտաբար, Նոր-Ջուղայի հանդստարանում չկարողայանք դտնել նրա տապանաքարը:

Եւ իսկապէս ո՞վ կարող էր նկարչին ներկայացրել իր արժանի մեծութեամբ, քան ականատես պատմագիրը: Ահա նրա տողերը.

«Այլ եւ պարտ վարկամիմ մեզ ալանատես եղելոցս ոչ գանց առնել... որք են պարծանք եւ օգուտ մերում ազգի, որոց անուամբն են վարպետ Միմաս եւ վարպետ Յակոբեան եւ են տոյա երկոյնեան ի ցեղէն Ջուղայեցոց»:

Թէ իսկապէս ո՞վ է վարպետ Յակոբեանը, ո՞րտեղ է ուսել նկարչական արուեստը, ի՞նչ

ժանրի նկարիչ է եւ ի՞նչ գործեր է թողել*): այդ հարցերի մասին զարմանալիորէն լուռ է մեր պատմութեան հեղինակը եւ միայն յիշատակում է Մինասի որոշ նկարները:

Սակայն պարզելու համար, թէ Մինաս ի՞նչպիսի բովանդակութեամբ նկարներ է դր՝ Տիւ, այստեղ առաջ բերենք նրա մեզ յայտնի ստեղծագործութիւնների ցուցակը, որ մօտաւորապէս ներկայացնում է հետեւեալ պատ - կերը:

1.— Ջրաղ համի դիմանկարը:

2.— Բագէն եւ ոռւս քաղեակիրը:

3.— Յիսուսի նկարը (գտնուած է Նոր-Ջուռայի Ս. Ամենափրկչեան վանքի թանգարան - նում. ենթադրում է, որ Մինասի գործն է):

4.—Խոջա Սարգիսազնից ապարանքի որմնա - նշխարները, որոնց մասին վկայում է պատմու - դիր Առաքել Դարբիժեցին: Այժմ ապարանքն աւերակ է:

5.—Խոջա Պետրոս Վէլիքանցնից ապարանքի որմնանկարները, որոնց ուսումնասիրել ենք ան - ժամբ եւ կ'անդրադառնանք յետոյ:

6.— Մանուկ Յիսուս, Տիրամայր, երեք - իովիւններ եւ մի կին: Սրանք մէ չըջանակի մէջ առնուած, վեց փոքրագիր նկարներ են: Վեր - ձինդած են կաշուի վրայ, 17րդ դարում, Նոր - Զուլայում: Ենթադրում է, որ պատկանում են նկարիչ Մինասի վրձինին: Գտնուած են Ս. Ամենափրկչեան մատենադարան-թանգարան - նում:

7.— Տիրամայրը եւ իննգ երեշտակների գը - լուխներ: Մի չըջանակի մէջ առնուած, վեց փոքրագիր նկարներ են, որոնք նկարուած են կաշուի վրայ, 17րդ դարում, Նոր-Ջուլայում:

*) Նոր-Ջուլայի մատենադարան-թանգա - րանում կան 17րդ դարում կտաւի վրայ նկար - ուած երկու նկարներ, որոնք համարւում են նկարիչ Յակոբբանի ստեղծագործութիւնները: Դրանցից առաջինը *Քոջա Յակոբբան Վէլիքան - Խանի* նկարն է, որ՝ Ջուլայի եին տարագով՝ ծնկաչոք աղօթում է, գլխարկը եւ համրիչն առջեւը դրած: Երկրորդը *Քոջա Ոսկան Վէլի - քանեանի* նկարն է. նոյնպէս Ջուլայի եին տա - րագով՝ աջ ձեռքին ուրաք գցած, ծնրալիք, ա - ղօթում է, գլխարկը առջեւը դրած: Ա.Ն.

Վերագրում են Մինասին:

8.— Յիսուս խաչուած: Գլուխը եւ քաղուկ - ների վերի մասը ծածկուած է փշէ պսակով: Նկարուած է փայտի վրայ, 17րդ դարում, Նոր-Ջուլայում: Համարւում է Մինասի գործ:

9.— Տիրամայր: Գլուխը ծածկուած է կա - պոյտ քողով եւ հագել է կարմիր զգեստ: Զրեանների եզրերը զարդարուած են ոսկեայ բանուածքով: Նկարուած է թիթեղի վրայ 17րդ դարում: Վերագրում են Մինասին:

10.— Ծառ-Արքաւ երկրորդը եւ սիրուինին: Գտնուած է Քոջա Սուքիսանեանց ապարան - քում. ոմանք վերագրում են Մինասին:

11.— Բնութեան տեսարաններ: Գտնուած են Քոջա Սուքիսանեանց ապարանքում:

12.— Սպանանի Սարուգաթի պալատի նկ - րերը (ըստ Եարդէնի):

13.— Սուլէյմանի ամարանցի (Բէհէշէ) զարդանկարները, կենդանագիրներն ու մանրա - նկարները*):


Ձ. ՄԻՆԱՍԸ ԵՒ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԵՆԱՆ ՏՆԱՃԱՐԻ
ՈՐՄՆԱՆՎԱՐՆԵՐԸ

Այստեղ լուսարանենք մի էական հանգա - մանք, թէ ո՞ւր մը վրձինին են պատկանում Նոր - Զուլայի Ս. Ամենափրկչեան վանքի տաճարի պատերի աստուածաշնչական քաղմբանք իւզա - ներկ որմնանկարները:

Մի քանի էտէտ-քննադատներ նկարչական արուեստի այդ հոյակապ յուշարձանը վերա - գրում են նկարիչ Մինասին: Այդ տեսակէտի վրայ է կանգնած պատմաբան Լէօն: Նա առանց որ եւ է չ'ընտարող ապացոյցի արձանագրել է հետեւեալը:

«Դա երեւիլի պատկերահամ Ջուլայեցի Մինասի գործն է, որ նկարչութիւնը սովորել է փերիայում, մի Ֆրանսացու մօտ, իր նուրբ ու սքանչելի գործերով մեծ հռչակ է տալիս: Եւ ապա զտնում է Ծառի պալատական նկա - րիչը»:

*) Նկարիչ Սարգիս Խաչատրեանը վերա - կազմել է Խոջա Պետրոսնից ապարանքի եղծան - աւած որմնանկարներից քանի կտոր: Ա.Ն.



Շնացող կիկը եւ անդամալոյծի բժշկութիւնը.
Նոր-Ջուղայի Բեթղեմիւ եկեղեցու որմնակարներէց.

Լէօի այս տեսակէտը համոզեցուցիւ չէ, որովհետեւ նա ստանց տեսնելու վամփի տաճարի որմնակարները, ռսկեգօծ ծաղկանկարներն ու գարդանկարները, վճռական կարծիք է յայտնել: Եթէ նա անձամբ տեսնէր եւ ուսումնասիրէր այդ նկարները, անկասկած իրեն թոյլ չէր տար նման սխալ էջեր արձանագրելու, թէ զաւտակ վարպետ Մինասի գործն է: Մեր պնդումները հաստատում ենք հէնց այն տուեալներով, որ որմնանկարների մէջ զգալապէս նկատելի են տարբեր ոճեր ու վրձիններ: Այդ տեսակէտից բաւական է մատնանշել տաճարի գմբէթի պատուհանների կից նկարուած Աղամ-Եւայի կեանքը ներկայացնող ութը պատկերները, որոնք իրենց նրբութեամբ եւ գեղարուեստականութեամբ միանգամայն տարբերուած են եկեղ'ցու միւս որմնանկարներից:

Բայց անցնենք պատմական աղբիւրներին: Պատմութիւնը նկարչական արուեստի այդ հո-

*) Շարդէնն իր իրանին նուիրած մեծահասոր եւ յայտնի աշխատութեան մէջ լսեցայն Մինասին է վերագրում յիշեալ նկարները:

յակապ յուշարձանը, որ ունի մօտ 270 տարւուայ անցեալ, վերագրում է Տիեզերադոյս Յովհաննէս անուով մի Ջուղայեցի վարդապետի: Այդ մասին մեր ձեռքի տակ ունենք երեք փաստական մատնանշումներ, որոնք իրենց բովանդակութեամբ կանգ են առնում արուեստագէտ-հոգեւորականի վրայ: Դրանցից առաջինը Մեսրոպ Թաղիադեանի «Ազգասէր» օրագրի (1845 թ. Ա. հատոր, թիւ 12) 96րդ էջի արձանագրութիւնն է, որից օգտուել է նաեւ Նոր-Ջուղայի պատմադիր՝ Յարութիւն Տէր-Յովհաննանցը: Իր պատմութեան 14րդ էջում նա, որպէս ծանօթութիւն, արձանագրել է այսպէս.

«Յաղագս նկարողի պատկերաց վամիս, այսպէս լիճի յիշատակութիւն յԱզգասէր Օրագիրն Արարատեան Ընկերութեանն Կալկաթոյթէ «գիտէր (Յովհաննէս Վարդապետն Ջուղայեցի Տիեզերադոյս կոչեցեալ) գնկարչութիւն կամ գպատկերահամութիւն, որով զարդարեաց գեկեղեցի վանացն Ամենափրկչի հրաշաքան պատկերօք, իւրով իսկ ձեռնարմ նկարելով գնո-



Վ Ե Բ Ե Ը — Եկեղեցու խորհուրդ. ներքից՝ Մկրտաւթիւնը.
Ն Ե Բ Բ Ե Ը — Գրիգոր Լուսաւորչի չարաբանքները.

Նոր-Ջուղայի Աւետիքիչեան վանքի տաճարի որմնանկարներից (17րդ դար)

սին... Ըստ որում վերատեսույն նայն լրագրոյ գիտնական Մեսրոպին Թաղիադեանց ունելով ինքեան առաջնորդ ըստ այնմ մասին գիտաշտուր վարդապետ ուն Ջուղայեցի պատմաբան՝ գրքեաց զայն տեղեկութիւն, վասն որոյ համարի ստուգապատում»:

Այս առաջին փաստական վկայութիւնն է, վանքի տաճարի որմնանկարների ամենագլը — խառքը նկարչի մասին:

Ունենք նաեւ մի երկրորդ արժէքաւոր աղբիւր: Դա Մ. Ամենափրկչեան տաճարի Հիւսիսային որմի վրայ, սեղանի աստիճաններից վեր, մի հողեւորականի պատկերն է, որ բաղկատարած ծնրադրել է: Ժողովրդական աւանդու — թեան համաձայն՝ զաւելեղեցին նկարադարդոյ տիեզերալոյս Յովհաննէս վարդապետն է, որ եկեղեցու նկարադարդութիւն աւարտելուց յետոյ Հէնց իր ձեռքով, որպէս յիշատակ՝ դծել է նաեւ իր կենդանատիպը:

Բայց ունենք մի երրորդ աղբիւր, որից իրենց տեղեկութիւնները քաղել են թէ՛ «Ազգա-

սէր»ի խմբագիր Մեսրոպ Թաղիադեանը եւ թէ՛ Նոր-Ջուղայի պատմութեան Հեղինակ՝ Յարութիւն Տէր-Յովհաննէսը: Դա պատմագիր՝ Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» գիրքն է, որի համառօտ ձեռագիրն առաջին անգամ լոյս տեսաւ 1795 թուին Մադրասում, Յարութիւն քահանայ Շմաւոնեանի խմբագրած ամենատառջին հայ լրագիր՝ «Ազգաբարձր»ում: Այդ շահեկան աշխատութեամբ նաչառուր Ջուղայեցին ոչ միայն վկայում է, որ Ամենափրկչեան վանքի տաճարը նկարադարդել է Յովհաննէս Տիեզերալոյս վարդապետը, այլ եւ իր պատմութեան 210րդ էջում տալիս է նրա կուլտուրական կեանքի պատկերը: Պատմագիրի վկայութեամբ՝ պատմաչըջանի հողեւորականութեան այդ ցայտուն դէմքն իր լուրջ, բազմակողմանի պատրաստութեամբ եւ կրօնական ու իմաստասիրական հմտութեամբ ոչ միայն հռչակում է «Տիեզերալոյս» կոչմանով, այլ եւ Ժողովրդից սերւում է եւ յարգւում իբրեւ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած մաք-

բակենցաղ Հոգեւորական, իբրեւ գիտնական, իբրեւ լեզուաբան, արաբերէն, իրաներէն ու հայերէն լեզուներով շարադրուած գիտական, լեզուաբանական, կրօնա-քարոյական մի շաւղիստութիւնների հեղինակ։ Այս մասին առաջ բերենք Մեարզաթաղի գիտնականի «Ազգասէր»-ում տպուած հետեւեալ տողերը․


«Սա քաղում ջանիւմ եւ աշխատասիրաւ — քեամբ յետ կատարելագործելոյ իւր մայրենի հայ լեզուն, սկսաւ ուսանիլ մանւ արաբացի եւ պարսիկ բարբառս։ Եւ այնքան կատարելագործեց հայերէնի սովով իւր նոր սովորեալ լեզուն, մինչ կարողացաւ, որպէս հայերէնում։ Ոոյնպէս արաբերէն եւ պարսիկ լեզուներում եւս՝ համարձակ գրիչ խաղացնել եւ գրէր շաւղիքի»։

Արուեստադէտ վարդապետն իր ժամանակաշրջանում յայտնի է դառնում նաեւ իբրեւ տաղանդաւոր քարոզիչ եւ վիճող։ Յաճախ վէճի է մտնում իրանցի եւ արաբ նշանաւոր կրօնապետների ու գիտնականների հետ եւ իր տարածաբանական առողջ դատողութեամբ եւ սա-

հուն լեզուով միշտ էլ յաղթում։

Տիեզերալոյսն իր ժամանակակից մտաւորականների շարքում փայլում է նաեւ իբրեւ հմուտ թարգմանիչ։ Շահ-Աբբաս արքան երբեմն մեծ հանգիսով վալիս է Ս․ Ամենափրկիչ — շեան վանքը եւ մտնելով եկեղեցի, հրամայում է կարդալ Աւետարանը։ Նման հանգալ մասերում, ահա, բեմ է բարձրանում Յովհաննէս վարդապետը, կարդում Աւետարանը Լւրովանդակութիւնը քաջատրուած արքային, միաժամանակ պատասխանելով նրա բաղձաթիւնը․ «Երբեք ինչ իրաներէն ու արաբ, լեզուներով թարգմանում է եւ մեկնարան»։ Հին ու նոր կտակարանները եւ զարմանք պատճառում իր ունեւորներին։

«... Երանելին տիեզերալոյս մեր, — կարգում ենք «Ազգասէր» (1845 թ. թիւ 12) 94րդ էջում, — հաւաքեալ զամենայն հարցմունս արքայի, եւ իւրաքանչիւրոց մին մին պատասխանի գրեալ մի երեսն ի բարբառ Պարսից բառաւ բառ, եւ տող առ տող, մատուցանէ Արքայի, որով յոյժ զարմանաւ... մեծարեալ յար-



Աստուածածնի մահը եւ քաղումը
Նոր-Ջուլայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնակարներից (17րդ դար)



Գրիգոր Լուսավորչի չարչարանքները. վերելք — Դրոշմը.
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնանկարներից (17րդ դար)

գեմ գեա, եւ սեանչաման ի վերայ նորա»:

Բայց մի գիծ, որ էլ աւելի բարձրացնում է իր ժամանակի բացառիկ յատկութիւններով օժտուած գիտնական Հոգեւորականի պայծառ գէմքը, դա նրա նկարչական խոշոր ձիրքն է՝ որի շնորհիւ էլ նա այսօր ուրոյն էջ է գրաւում նկարչական արուեստի պատմութեան մէջ: Բայց այդ ժառին տանք ձևզատէրոյ վկայութիւնը.

«... Գիտէր գնկարչութիւն կամ զպատկերաշանութիւն, որով զարդարեաց գեկեղեցի Ս. մենափրկչի երաշագան պատկերօք. իւրով ի՞՛մեռամբն նկարելով գեմսին, որոց խորհուրդիւտիցն, ճաշակ վայելչութեանցն, եւ վախճանն դիտաւարութեանց, մինչեւ ցայսօր ի հիւսցումն եւ յափշտակութիւն կրթեն զմիտս տե սանոգացն: Ոչ կամիմ վաշրապար զրոյցս տ իմոց քնքերցողաց: Ամենայն ոք քաջ գիտէ գնիզն Սեփափեանց ի շինութիւնս քաղաքաց, արքունի ապարանից եւ պալատաց յԱպաշան: Ամենայն ոք քաջ գիտէ ճանս գգերազանցասէր քնաւորութիւն Ազգիս, զի յորմամ ինչ օրինակել կամիցին յայոց, կամին յաւէտ գերազանցել քան ճանինի: Վկայ լիցին քաջ քանիս՝

հոյակապ ապարանք մեծամեծ իշխանաց մերոց ի Նոր Ջուղայ, որոց քայքայեալ, քայց եւ անպարտաւան անբակք իսկ՝ անբարբառ աղաղակներն քէ որ շինեաց զիս կամ քազաւոր էր, կամ քազաւայակերպ մարդ: Այս ընդհանուր շինութիւնք Հայոց եւ Պարսից հարկաւորապէս համախմբեալ ժողովին անդր հմուտ հմուտ արհեստաւորս յամենայն աշխարհաց, յԱսիոյ . Եւրոպոյ, եւայլն: Յորոց ի՞նչ զարմամք. քէ եւ կորովամիտ վարդապետ մեր ուսեալ եւ կատարելագործեալ իցէ զարեհտուն պատկերաշանութեան: *Ուսանիչն*, ամենայն ոք ընդունի, քայց քերեւս կատարելագործել ասելն ծանր երեսեացի ումանց: Եթէ այսպէս իցէ, եւ որ զամենայն խորշ եւ անկիւն հին եւ նոր-արքունեանց Աս — պաշանայ մտի, եւ զազգիւր բոտ մեծի մասին ի բացահայեաց տաճարաց իշխանաց մինչ ի խորհիք շինականին մաղեցի, չեմ ուրեք տեսեալ պատկեր, որ հաւասար իցէ վայելչութեան եւ արուեստին պատկերաց եկեղեցւոյն Նոր-Ջուղայ: Ի՞նչ հաւատաս, գնա՛, տե՛ս: Գիտէր սա յօրինել եւ անուաւոր ժամացոյցս, որ հասարակօրէն ծոցի տակաբ կռչի: Նայեալ եւ զայլ եւայլ մեռակերտութիւնս, զորոց չէ հարկ երկա-


րեմն» («Աղղասէր» հատոր Ա., թիւ 12, Կալ-
կաթա, 1845 թ. էջ 96):

Թէ՛ ինչպիսիք Զուգայեցու եւ թէ՛ «Աղ-
ղասէր»ի պերճախօս վկայութիւններն ու յիշա-
տակարաններն առանձին եւ կարեւոր նշանա-
կութիւն ունին Հնչոյ այն տեսակէտից, որ պար-
պում են մի շատ կարեւոր հանգամանք. միան-
գամայն հերքում են թէ՛ Լէօի եւ թէ՛ այն բո-
լոր բանասէրների կարծիքները, որոնք վանքի
տաճարի որմնակարների նկարիչը համարում
են սոսկ Միխայիլն: Կայ աւելին: Ինչպիսիք
Զուգայեցին համարեայ թէ՛ ժամանակակից է
Յովհաննէս Տիեզերալոյս վարդապետին: Ար-
ուեստագէտ վարդապետի մահուան (1716 թ.) ե
պատմագիր Խաչատուր Զուգայեցու ծննդեան
(1730 թ.) թուականներն իրարից բաժանում
են տասնեւորս տարուայ ժամանակաշրջանով:
Պարզ է, ժամանակի գիտնական պատմագիրը,
որ թողել է «Պատմութիւն Պարսից» խորագրով
մի լուրջ եւ բարեխիղճ երկասիրութիւն, չէր
կարող առանց փաստերն ստուգելու, դրական
կարծիք յայտնել: Սակայն, այժմ էականն այդ
չէ, այլ այն, որ ո՛վ էլ լինի նկարչական ար-
ուեստի այդ մեծ կոթողի հիմնական նկարիչը,

մի հանգամանք որոշապէս պարզ է, որ տաճարի
ներքեւից մինչեւ դմբէթի եւ առաստաղի ծայրը
դժւած որմնակարների, ոսկեղօծ ծաղկանկար-
ների, զարդանկարների պոչների ու գծերի ըս-
քանչլի ներդաշնակութիւն ի յայտ բերող այդ
պատմական գեղարուեստական անշարժը ո՛չ
քէ միայն մի նկարչի, այլ մի քանի տասնեակ
ակամաւոր արուեստագէտների ու մազաշների
ստեղծագործական աշխատանքի արդիւնքն է:
Մի վեհ աշխատանք, որին լծուել են տարբեր
ժանրի նկարիչներ — ծաղկողներ, ոսկողներ,
զարդանկարիչներ, իւղանկարիչներ, դժադրի-
չներ, գիմանկարիչներ, բնանկարիչներ, ստի-
լիստներ, նաղաչներ եւ այլ արուեստագէտներ.
որոնք միասնական աշխատանքով, մօտաւորա-
պէս ինը տարուայ (1659-1669) ընթացքում,
իրագործել են տաճարի նկարադարձման դժ-
ուարին, բայց գեղարուեստական արժէք ներ-
կայացնող Հոյակապ դործը: Սա անժխտելի
փաստ է: Անժխտելի է եւ այն, որ Յովհաննէս
Տիեզերալոյսը հանդիսացել է ամենապատաս-
խանատու եւ անմիջական մասնակցութիւն ու-
նեցող ղեկավար նկարիչը, որի ձեռքի տակ աշ-
խատել են բազմաթիւ տաղանդաւոր նկարիչներ



Ղազարու Յարութիւնը
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնակարներից (17րդ դար)



Դրիգոր Լուսաւերչի չար չարամքները — Պատարագը.
Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տաճարի որմնանկարներից (17րդ դար)


և նազանքեր: Այդ երեւոյթն արձանագրել է նաեւ Նոր-Ջուղայի պատմագիր Յարութիւն Տէր-Յովհաննանը: Ահա նրա տեսակէտը.

✠ «Այլ ինձ հաւամալեան քուի կարծել քէ առանց օգնականի կամ գործակցի դժուարին էր նմա յանգաւորել գործը պատկերացնի եւ ծաղկանց, ուստի եթէ եղեալ են նմա օգնական կամ գործակիցք, եղեալ են ներսում պատկերա — հանք» («Պատմութիւն Նոր-Ջուղայու» էջ 15):

Սա մի ճշմարտութիւն է, որը հաստատում են որմնանկարների, ծաղկանկարների եւ զարդանկարների միանգամայն տարբեր ռեքնն ու վրձնները: Ընդհանուր առմամբ պիտի ասել, որ ոսկեզօծ ծաղկանկարների ներութիւնը, գոյների փայլն ու աղնութիւնը եւ մանաւանդ զրօծերի ու երանդների սքանչելի ներդաշնակութիւնը, եւ վերջապէս որոշ որմնանկարների գեղարուեստականութիւնը, իսկ ոճանց էլ չքեղութիւնն ու կատարեալ նրբութիւնը ներկայացնում են երկու տարբեր դպրոցներ: Դրանցից առաջինը որմնանկարների արուեստն է, որ իր էութեամբ կրում է իտալական նկարչութեան ազդեցութիւնը: Առհասարակ թէ՛ դիմագծերը, թէ՛ մարմնի շարժումները, թէ՛ կեց-

ուածքները, թէ՛ զգեստները եւ այլ արտայայտութեան նուր ձեւերը ունին իտալական վերածնութեան շրջանի դրոշմը: Այդ հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ տաճարնկարագրող արուեստագէտ — նկարիչներն իրենց ձեռքի տակ ունեցել են իտալական ներկարներ, որոնցից թւում է որ օգտուել են եւ յաճախ ընդօրինակել: Դրա պերճախօս ապացոյցն ասէ է, որ Ոսկանի 1666 թուին Ամստերդամում առաջին անգամ ապագրած Արուեստաժանի մի շարք պատկերները — Յիսուս ծովի վրայ, Ոտնալուայ, Սատանայի փորձութիւնը, Այլակերպութիւն, Վերջին Դատաստանը եւ այլն, — որոնք իտալական նկարչական արուեստի գործեր են, տեսնում էք նաեւ տաճարի որմնանկարների վրայ:

Երկրորդը՝ ծաղկանկարներն են, որոնք ունեն իրանեան արուեստի շունչը: Սէֆէվեան նկարչութեան շրջանին պատկանում են նաեւ պոյների զարմանալի խաղաղօրէնութիւնն և դերազանց ներդաշնակութիւնը: Իրանեան են նաեւ ներհակ պոյներն ու նրբաշունչ երանդները: Այս էական լուսաբանութիւններից յետոյ առաջ է գալիս նաեւ մի էական հարց. արդե՞ս,



Նոր-Ջուլայի հոգա Պետրոս վելիցանենց ապարանքի որմնանկարներից (17րդ դար) .

Գործ նկարիչ Մինասի .

տաղանդաւոր նկարիչ Մինասը մասնակցել ! վանքի տաճարի նկարազարդմանը *) : Դա մշտապէս կարելու է, որը դեռ կարօտ է լուսնուսումնասիրութեան : Տաճարի որմերի արձանագրութիւնները, դժբախտաբար, այդ մասին ցայտուն գաղափար չեն տալիս ու չեն մատ-

*) Նկեղեցին իր ծախքով նկարել եւ ծաղկել է տուել Նոր-Ջուլայեցի հոգա Աւետիքը : Այս մասին տաճարի սեղանի ներքնակամարի հիւսիսային կողմի շրջանակի մէջ կարդում ենք հետեւեալ ոսկեգիր արձանագրութիւնը .

«Ջանգ աղաչեմ ընթերցող տառիս, Յիշել նկարող գաւարք խորանիս, Որ միշտ տարիմամբ ցանկայր բանիս, Սա զԱւետիք գինգանգիս, Զհօրմ հանգուցեալ Ստեփաննոսիս, ԶՄարգարիտմ՝ ծնողիս... :

Խոջա Աւետիքի պատկերը գծուած է տաճարի հիւսիսային պատի վրայ, Արքայութեան նկարի մէջ, ուր նա գրկել է խաչափայտը :

նանչում, թէ ժամանակաշրջանի վարպետ նկարիչներից ո՞վքեր մասնակցել են զարդանկարմանը : Իսկ այդ մասին Նոր-Ջուլայի թանգարանի ձեռագիր մատենաների յիշատակարաններ եւ ո՛չ էլ դիւանատան թղթերի եւ վաւերագրերի մէջ որ եւ է փաստացի աղբիւրներ չգտանք : Բացայայտ է միայն տաճարի նկարազարդման թուականը, որ ընդգրկում է 1659-1669ը :

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ նկարիչ Մինասի արուեստը հասել էր իր կատարելութեան : Դժուար թէ նա վանքի նկարազարդմանը չընդգրկէր իր մասնակցութիւնը : Այդ երեւոյթը կարելի է ապացուցել Խոջա Սուքիասենց, Խոջա Պետրոսենց եւ վանքի տաճարի որոշ որմնանկարների համեմատական ուսումնասիրութեամբ : Սուր եւ դիտող աչքը կը հաստատի, թէ Սէֆէվեան շրջանի գեղարուեստական կոթողներում կան նկարներ, որոնք թէ՛ իրենց երանդներով եւ թէ՛ ոճով պատկանում են Մի-



Խոջա Պետրոս Ոսկան Վելիցանեան.
Նար-Ջուլայի Ամենափրկչեան վանքի քանդարանի գլխաւորը.


նասի վրձինին: Ուսումնասիրէք Խոջա Պետրոսն ու Խոջա Սուքիասնց ապարանքների իրանական զգեստների ծաղկանկարներն ու երանդները եւ համեմատէք Ամենափրկչեան վանքի տաճարի հէնց երեք մուգերի զգեստների ծաղկանկարների ու գոյների հետ եւ պիտի տեսնէ, որ նոյն նկարչի վրձինի ոճն ու գեղարուեստակերթուքները:

Է. ՄԻՆԱՍԻ ԱՐՈՒԵՍՈՐ

Այժմ Խոջա Պետրոսի եւ Խոջա Սուքիասապարանքների ու Ս. Ամենափրկչեան վանքի տաճարի որոշ որմնանկարների համեմատական վերլուծութեամբ փորձենք պարզել մեզ հետաքրքրող երկու կարեւոր խնդիրներ. ա) իբրեւ

նկարիչ Մինասն ի՞նչպիսի առանձնապատկութիւններ է երեւան բերել եւ բ) որո՞նք են նրա արուեստի հիմնական գծերը:

Անվերապահօրէն պիտի արձանագրել, որ Մինասը Վերածնութեան իմաստով հմուտ եւ կաղամկերպուած մի մեծ նկարիչ է: Նկարչութեան արուեստը սովորելով մի եւրոպացի գեղարուեստագէտի մօտ, կրել է եւրոպական ազդեցութիւնը: Թերեւս զրանով էլ պիտի բա՝ ցատրել, որ նրա մի շարք նկարները վրձինուած են եւրոպական ոճով: Այնտեղ տեսնուած էք եւրոպական ոճով տնակներ, եւրոպական զգեստներ եւ արեւմտեան դէմքեր: Աւհաստարակ նա իր արուեստին միացրել է արեւելեան եւ արեւմտեան նկարչութեան կատարելութիւնները:



Արեւելեան բնանկար. Նոր-Ջուղայի Խոջա Պետրոսեմց ապարամքի քրմամկապոմբից.
(17րդ դար). գործ՝ Ակարիչ Մինասի.

և այդ տեսակէտից նորութիւններ է մտցրել իրանական նկարչութեան մէջ: Սա Մինասի արուեստի ամենադրական գծերից մէկն է:

Նրա տաղանդը հարուստ է եւ րազմակողմանի: Գծել է կենդանապիւրներ, բնութեան տեսարաններ, հոգեբանական եւ կենցաղային նրկարներ: Ուշադրաւ է մանաւանդ այն, որ նա բնութեան բազմերանգ եւ գեղեցիկ երեւոյթները — բոյներ, տունկեր, անասուններ, դաղաններ, թռչուններ, մարդկանց — նկարել է ո'չ միայն մեծ հմտութեամբ, այլ եւ ա'յնքան բնական եւ խօսուս գծերով որ գրաւել է իր ժամանակակից արուեստագէտներէ ուշագրուած թիւը:

Նկարիչը փայլել է նաեւ իր զծած դիմանկարներով: Նա երկար ժամանակ ապրելով

Սպահանում, մօտիկից ուսումնասիրել է տարբեր ժողովուրդներէ եւ մարդկանց դիմազները, նրանց արտայայտութեան առանձնայատուկ ու բնորոշ գծերը, հոգեբանութիւնը, զգացմունքի տարբեր տրամադրութիւնները, միաժամանակ մանրամասն դիտել է տարբեր ազգերի վարք ու բարքը, կենցաղը, սովորութիւնները եւ այդ բոլոր հիմնական գծերը կարողացել է արտայայտել մի շարք դիմանկարներով:

Նկարչի արուեստի ամենարնորոշ գծերից մէկն էլ այն է, որ նա իր դիմանկարների զրել է հոգեբանական արտայայտութիւն: Նա գծերի եւ գոյների մի ամբողջական գծադրութեամբ ո'չ միայն տուել է կենդանի եւ խօսուն տիպեր, այլ եւ դրսևւորել է նրանց ներքին հոգեկան աշխարհի ուրոյն առանձնայատուկութիւն-

ները: Այդ տեսակէտից նա մի շարք եւրոպացի յայտնի նկարիչներին զերազանցել է:

Սակայն, Մինասն իր ժամանակաշրջանի նկարիչների շարքում աչքի է ընկել ո'չ միայն իր արուեստի բազմակողմանի տուեսակներով, այլ և իր հարուստ տեխնիկայով: Իրանական նրկարչութեան ուժեղ ազդեցութեան ներքոյ, գլխաւորապէս իր ժամանակակից նկարիչնե-րին — Ռեզա Աբասսին, Մոզաֆֆար Ալիին հետեւելով, նկարել է մի շարք դժանկարներ: Գըծել է նաեւ իւղանկարներ, մի երեւոյթ, որ այդ պատմաշրջանում դեռ եւս ընդունուած չէր իրանցի նկարիչների մօտ: Նոյնպէս ունի ջրանկարներ: Բայց աւելի ուշադրաւն այն է, որ նկարել է ո'չ միայն պատերի, այլ և կտաւների, ընտիր մագաղաթի, տախտակի, պղնձի և վերջապէս քարտէսի վրայ: Այդ մասին Դաւրթեցին վկայում է այսպէս.

«...Եւ յորում հասակի լինէր գաղափարն, այնմ հասակի յարմարեալ նմանցնացանէր գնկարեալ պատկերն, եւ թէ ճիշդով պատկեր, եւ թէ առանց ճիշդ, ի քարտիսի, ի կտաւի, ի տախտակի, ի պղնձի, ի յորմն՝ եւ այլ ինչ կերպիւ յոր եւ պիտոյաճայո՞ր:

Մինասը զարկ է տուել նաեւ մանրանկարչութեան: Նա արուեստի նրբութեամբ ծաղկանկարել է և նկարազարդել իր ժամանակի ձեռագիրները, դործածելով ոսկի և լաջվարդ պոյները, որոնք յատուկ են եւ սիրուած Իրանի նկարչութեան մէջ: Այդ նկարազարդ ձեռագիրներից ոչ մէկը, դժբաղդաբար, մինչեւ օրս էլ չի յայտնարեւուած: Ունինք միայն պատմադրի յիշատակագիրը:

«...Այլ եւ գրքք էր ծաղկող, գինչ եւ գիրք հաճոյիպէր՝ ռակով եւ լաջվարդով ծաղկեալ գարդաբէր, քանզի գամնայն մամաւոր արհեստ, որ այնմ նկարակերտ արուեստիս հետեւի, գամնայնմ անքերի գիտէր»:

Առհասարակ Մինասի նկարչական խոշոր ձիրքի եւ ժամանակի ընդադատութեան մասին որոշ դադարաւոր տալու համար այստեղ առաջ բերենք Առաքել Դաւրթեցու պատմութեան 412րդ էջից հետեւեալ գնահատական տողերը.

« Բնական ունէր շնորհս եւ տեսութիւն

մտաց, որ յառաջագոյն գորպէսն եւ զհանգամանս կերպարամաց ամենայն իրաց, կերպացուցեալ ճշգրտապէս ի միտս իւր եւ ապա նկարէր: Եթէ բուսոց եւ տնկոց, եթէ անասնոց եւ գազանաց, եւ թէ թռչնոց եւ մարդոց: Եւ թէ մարդոց՝ որոց ազգաց եւ իցէ, թէ Պարսից, թէ Հայոց, թէ Եւրոպացոց, թէ Հնդկաց, թէ Ֆռանկաց, թէ Ռուսաց, թէ Վրաց, քանզի որում ազգի կերպարամ որ նկարէր, ամենեւին յար եւ նման նկարէր. առնպէս եւ ի ներգործութիւնս եւ ի կիրս լինէր մարդն, թէ ի ծիծաղի, թէ ի բարկամալ, թէ ի տրտմութեան, թէ յարբեցութեան, թէ ի յորանջի, թէ ի յրախտութեան, թէ ի մարտ պատերազմի եւ թէ որեւիցէ կրիւհ նկարէր գկերպարամս մարդոյ, որում ազգի եւ լինէր, ամենեւին յար եւ նման նկարէր»:

Առաքել Դաւրթեցու ընդադատական նուրբ դիտողութիւնը եւ նկարչի արուեստի մեծութիւնը տեսնում ենք նաեւ հետեւեալ վերլուծութեան մէջ.

« Զժամանակն կեանաց մարդոյն նկատեալ մտօք իւրով, ըստ նմնն նկարէր գզգզն եւ գզգոյն ... որպէս տրոնեալ գամագանին ի միւնեանց տամամեանն, եւ քանամեանն, եւ երեսնամեանն եւ քառամեանն. եւ յորում հասակի լինէր գաղափարն, այնմ հասակի յարմարեալ նմանցնացանէր գնկարեալ պատկերն»:

ԽՈՋԱ ՊԵՏՐՈՍԵՆՏ ԱՊԱՐԱՆԻՔԻ
ՈՐՄԱՆԱԿԱՐՆԵՐԸ

17րդ դարի Նոր-Ջուղայի նկարչական արուեստի պատմութեան ուրոյն էջերն արձանագրող զեղարուեստագէտ — բանասէրն անպայման պիտի անդրադառնայ Ջուղայեցի Նախկին մեծահարուստ Խոջա Պետրոս Վէլիջաննց ապարանքի արժէքաւոր որմնանկարների մասին, որոնք թէ՛ իրենց զեղարուեստական նրբութեամբ և թէ՛ ըովանդակութեամբ առանձնաշատուկ տեղ են գրաւում սէֆէվեան պատմաշրջանի նկարչական կուլտուրայի պատմութեան մէջ: Այդ պատմական որմնանկարներն այսօր ցայտուն դադարաւոր են տալիս խոջա Վէլիջանեան նշանաւոր եւ զեղարուեստագէր ազգագետ-



Որսթրդական աշխարհ. — Նոր-Ջուղայի հաջա Պետրոսի ապարանքի որմնանկարներից (17րդ դար)․ գործ նկարիչ Մինասի․

մի մասին եւ քնդգծում են նրանց նկարչութեան հանդէպ տածած անհուն սէրը։

Բայց Վէլիջանեանց տոհմի պարծանքը միայն այդ պատմական յուշարձանը չէ․ նրանք թէ՛ Նոր-Ջուղայում ու թէ՛ Հարաւային Հընդկաստանի Մադրաս քաղաքի շրջակայքում թողել են մի-երկու կոթողներ, որոնք աթոր նըլում են նրանց շինարարական ոգին։ Բանանք այդ պատմութեան էջերը։

1627-28 թուականին, Շահ-Աբբաս Մեծի ժամանակաշրջանում Նոր-Ջուղայում կառուցւում է մի բարձրաբերձ, կամարակապ եւ փառադարձ եկեղեցի, որի պատերը զարդարուած են ոսկեգօծ ծաղիկներով եւ աստուածաշնչաւան նկարներով։ Դրանցից մի քանիսը պրաւ են ձեր ուշադրութիւնը հէնց նրանով, որ իրենց զեղարուեստական նրբութեամբ աւելի դերա-

զանց են, քան Ս․ Ամենափրկչեան վանքի տաճարի որմնանկարները։ Դա Նոր-Ջուղայի Մէյդան թաղի Բեթղեհէմ եկեղեցին է, որ հիմնըւել է Ջուղայեցի նշանաւոր վաճառական՝ հաջա Պետրոս Վէլիջանեանի նիւթական միջոցներով։ Այդ են վկայում եկեղեցու սեղանի առաստաղի վրայ դրոշմուած արձանագրութեան հետեւալ տողերը․

«Յիշեցեք Դի Գրիստոս
զհոջայ Պետրոսն,
Որ շինեցաւ ձեռամբ
Մեծին Պետրոս այր ցանկալին,
Հօրն իւրայ Վէլիջանին
եւ մօրն Շուշանին.
Տէր Աստուած ոգորմնացի
Ացիկն, Երմն Ռ Հ է։

Ուսենք մի այլ յիշատակարան: Դա եկեղեցու հիւսիսային դրան ճակատին դրոշմուած քարն է, որի վրայ քանդակուած է հետեւեալ ոտանաւորը.

«Յիշել ՚ի Տէր զՄահիսին
 Խոջայ Պետրոս աշր ցանկալին,
 զՎէլիջան հայրն նորին
 Ընդ տիկին մօր իւր Շաւշմին:
 Եկեղեցիս Բեքաքահէւին,
 Որ շինեցաւ արդեամբ նորին,
 ՚ի յիշատակ իւրոյ տոնմին,
 Եւ գաւակաց իւր տօնիլին,
 Ի Խւին Հայոց 1077: (1077+551=1628 ք.)

Աւելացնենք եւ այն, որ Նոր-Ջուղայում կառուցուած տաճարեօթն եկեղեցիներէ մէջ Բեթղէհէմի եկեղեցին հպարտ է ո՛չ միայն իր նկարներով եւ ճարտարապետական ուրոյն ու՝ ճով, այլ եւ իր ամենաբարձր գմբէթով, որ ասանձնապէս աչքի է ընկնում իր կրկնակի կառուցուած լայն առաստաղով, մի երեսով, որն եզակի է գմբէթաւոր եկեղեցիներէ պատմու թեան մէջ:

Ո՞ր է, սակայն, նկարազարդ եկեղեցու հիմնաքի Ո՞րն Պետրոսը, ի՞նչ են ասում նրա կեանքի պատմութեան ուրոյն էջերը:

Պատմական արձանագրութիւններն ու յատակագրերը վկայում են, որ Ո՞րն Պետրոս որդին է Հայաստանից Նոր-Ջուղա գաղթած Վէլիջանի, որ նահապետն էր ժամանակի նշանաւոր Ո՞րն Պողոսեանց կամ Վէլիջանեանց ազգատոհմի: Նրա մասին, տարաբանութեամբ, կենսագրական շատ թիչ տուեալներ ունինք: Նրանցից առաջինը Թարութիւն Տէր Յովհաննէսի «Պատմութիւն Նոր-Ջուղայում» գիրքն է, որի 128րդ էջում կարդում ենք.

«Վէլիջան գաղթեալ ի Հայաստանայ նա՝ Խապետ եղև Խոջա Պողոսեանց ազգատոհմին: Մնալ ի նմանէ Խոջա Պետրոս քր թէ ըստ մեծութեան ընչից եւ թէ ըստ Խոջայն ջերմեանդութեան յառաջադէմ հանդիսացեալ իւրով աղայեամբ կառայց գնակայաշէն եկեղեցին Բեքաքահէւի՝ հասարակօրէն Մէլլաքանի ժամ կոչեցեալ»:


Ո՞րն Պետրոսի մասին ունենք մի այլ յատակագիր: Դա Նոր-Ջուղայի Բեթղէհէմ եկե-

ղեցու արեւմտեան կողմը, մի սենեակում հանգչող կճեայ տապանաքարն է: Ո՞րն Պետրոս չիրմն է դա, որի վրայ քանդակուած է.

Ի տապանի աստ գետեղի
 Դի մահադի մեծ Խոջայի,
 Որոյ անուն Պետրոս կոչի,
 Այլ մեծաշուք եւ անուանի:
 Ըստ անուանկցին իւրոյ վիւի՝
 Կարծր հաւատով՝ գործօք բարի
 Քան զկար մարդոյ որդւմամի,
 Եւ սրբութեան հետեւողի:
 Եւ այլ գործօք ամբարի լի՝
 Որ հախստուն վկայ լինի,
 Որոյ գործոցն արդիւնէ յայտնի
 Եկեղեցեաւ հրաշալի:
 Կացեալ մահուք ի յաշխարհի,
 Սուրբ Յարութեան մէջ գիշերի,
 Ըստ հաճոյնց մերոյն Փրկչի,
 Որպէս գործօք՝ ալեօք ծաղկի:
 Միմչ սա Խաւսալ կէտ կոչողի՝
 Ի նոյն Տեառնէ մեր Խրալիւի,
 Ընդ անմահիցն դասակցի:
 Խնդրեմք զԱստուած կեցողանի,
 Սորա գործեալ մեղէն քաղցի
 Եւ յիշողացն ամենի,
 Թիլմն Ռ Ղ Ը Ի:

Ահա յիշեալ Ո՞րն Պետրոսի չորս որդիները — Ո՞րն Պողոս, Ո՞րն Միւսա, Ո՞րն Յովհաննէս եւ Ո՞րն Ղուկաս, — ժամանակաշրջանի վաճառականական ասպարիզում տնտեսական նուաճումներ են անում եւ իրենց հաճութեամբ ու դիրքով յայտնի են դառնում: Սակայն նրանցից տնտեսապէս արտակարգօրէն ծաղկում է եւ առեւտրական ասպարիզում գրաւում համարաւոր դիրք Խոջա Պողոսը: Այդ տնտեսկէտից էլ նա իրանի պատմաշրջանի առեւտրական արդիւնաբերութեան պատմութեան մէջ ունի իր առանձին էջը:

Ո՞րն Վէլիջանեանց ազգատոհմի պատմութեան մէջ նշանաւոր եւ կեդրոնական տեղ է գրաւում նաեւ աղայ Պետրոս Ոսկանը, որ 1720 թ.ականին Մալգարա քաղաքում մենավաճառութեամբ պայծառանում է եւ տնտեսական զգալի նուաճումներ անում ու հռչակ վայելում: Նա



Նոր-Ջուլայի Ամենափրկչեամ վանքի տան արի ռսկեգոծ գաղղանկարներից (17րդ դար)․

է որ երբ Անդլիացոց թագաւորն այցելում է Մադրաս, հիւրընկալում է նրան եւ այդ առիթով էլ սարքում արքայավայել մի փառաւոր խնջոյք։ Այդ օրից իշխան Պետրոսի համբաւն ու դիրքն է՛լ աւելի է բարձրանում եւ նրա հրոշակը տարածւում ո՛չ միայն Հայերի, այլ եւ օտարների մէջ։ Թերեւս դրանով պիտի բա-ցատրել, որ ժամանակակից պատմագիրները նրա մասին արտայայտուել են առանձին համակարգով։ Մի տեղ կարդում ենք՝ «Այր ազարակորով բարեւէր եւ խոնարհամիտ»։ Մի

ուրիշ տեղ՝ «... Այս երեւելի իշխան ոչ միայն եղեւ վեհանձն եւ վսեմամիտ, այլ եւ մեծա-դործ եւ առատաձեւն ի շինութիւնս հասարակաց օգտից»։ Այս ցարտուն տողերն էլ հաստատում են, որ իշխան Պետրոսն ապրել է ո՛չ թէ միայն իրեն, այլ եւ իր ժամանակի հասարակութեան երջանկութեան համար, նրա քարի ծուխեան պերճախօս կոթողները մինչեւ այսօր էլ դեռ կանգուն են Մադրասի լրկակայքում եւ անխօս վկաներ են նրա ժողովրդասիրական ոգուն։ Գծենք դրանց սեղմ պատկերը։

Մաղարայից երկու ժամ հեռու բարձրացող Ս. Թովմաս Առաքելայի սարերի մօտ ընկած է մի գիւղ: Դա Մամլանն է: Նրա միջով հոսում է Աղիար գետը, որի ջուրը բարձրանում է անձրեւային եղանակներին: Ահա այդ գետի վրայ Խոջա Պետրոսն իր սեփական ծախքով կառուցել է տալիս՝ մի բարձրաբերձ եւ բազմակամար քարաշէն գեղեցիկ կամուրջ, որի համար ծախսում է մօտ երեսուն հազար հոն: Կամուրջի մուտքին դրոշմուած է պարսկերէն, յառաջներէն եւ հայերէն լեզուներով մի արձանագրութիւն, ուր, հայերէն բնագրում, կարդում ենք.

«Շինեցաւ կարմուռնս

Ջուղայեցի Խոջայ Պողոսեմց

Ոսկանի որդի Պետրոսին

Արդեամբք եւ վաստակովքն

Թիվն 1726»:

Սա հասարակական մի գեղեցիկ կոթող է, որը պատիւ է բերում թէ՛ Հինադարի Խոջա Պետրոսին եւ թէ՛ Նոր-Ջուղայի հայ ժողովրդին:

Բայց Խոջայի շինարարութեան պատու - թիւնն այդ յուշարձանով կանդ չի առնում: Մաղարայի մօտաւորապէս վեց մղոն հեռու, մի մեծ բլրակի գագաթին, իշխում է նաեւ մի եկեղեցի: Դա Խոջա Պետրոսի բարեգործութեան մի այլ ցայտուն կոթողն է: 1726 թուականին նա լեւան ոտորոտից մինչեւ գագաթը քանդակել է տալիս քարաշէն եւ լքնապտոյտ 160 լայն աստիճաններ եւ մի քանի Հինադան սալալատակ նըստարաններ, որպէսզի ժողովուրդն եկեղեցի բարձրանալիս հանգստանայ:

1750 թուականին Խոջա Պետրոսը գրում է իր՝ կտակը, որով առաւելագրում է Նոր-Ջուղայում Հինին մի դպրոց, մի աղքատանոց եւ մի ատմանակ հրահանգում է նւթական աջակցութիւն ցոյց տալ չբաւորներին: Հայրենիքի կարգադրով տողորում Խոջա վանատականը նաեւ կտակում է մահիցն յետոյ սիրտը տանել եւ թաղել իր ծննդավայրում, Նոր-Ջուղայում: Վախճանում է 1751 թուականին Մաղարաում, ուր ամփոփում են նրա մարմինը՝ հէնց իր լինել տուած եկեղեցու արեւմտեան բակում: Նրա տապանաքարի արձանագրութեան մէջ ուշագրբաւ են հետեւեալ տողերը.

«Ի հրամանի իւր կտակի, սիրտն հանեալ մարմնայն անտի. եւ առաքեալ իւր հայրենի որ է գեօղն Ջուղա ասի.

Բաց կատարօգէ սա հրամանի, սիրտն հանիմ վաղվադակի. եւ կազմեցին ըստ պատշաճի, որպէս է պարտ չապականի,

Առաքեցին փութամակի ի տունս իւր հասանի, Այսպէս խնդրեաց փափազի իր ծննդեան տեղն հանգչի.

Ով հանդիպող այս տապանի բերան անէ՛ք մի ոգբորմ, Տէրն Քրիստոս ձեզ ոգբորմ, յաւուր մեծի դատաստանին, ամէն, 1751 »

Խոջա Պետրոսի վերջին կտակն իրագործում են նրա հայրենակիցները. իր մահից յետոյ նրա սիրտը բերում եւ թաղում են Նոր-Ջուղայում:

Այսօր Ս. Ամենափրկչեան վանքի Մատենադարան-թանգարանում, պահվին մեծ սենեակում կայ, կտակի վրայ վրձինուած, մի իւզաների մեծադիր նկար *) : Դա Խոջա Պետրոս Ոսկան Վէլիջանեանն է, որ ինքնամատահ կեցումքով հպարտ կանգնել է: Հագել է կապոյտ կապայ: Ձախ ձեռքը դրել է զօտու վրայ, իսկ աջ ձեռքում փետուրէ գրիչը բռնած, բացուած տետրի ձախ էջի վրայ գրել է.


«Սկիզբն իմաստութեան
Նրկիւզ Տեսնն Աստուծոյ»:

Այլ էջի վերեւի մասում դրոշմուած է 1737: Նկարի ներքեւի ձախ անկիւնում նկարուած է մի սիրտ, որի կից գրուած է հետեւեալ անպաճոյճ բանաստեղծութիւնը.

«Սիրտ իմ ցամկա գեպքնի,
Թէ գրեալս չը ժամանեցի,
Յարժամ հասցէ ինձ օր վերջին,
Սիրտս յգեցի առ հարեմին,
Ձի գերեզման անդ լիցէ իմ
Պետրոս Ոսկանիս»:

Ահա Վէլիջանեանց այս նշանաւոր ազգաստեղծ-

*) Նկարիչ է հոյանդակաւ նկարիչ Tom S. Gorge (An. Dom. 1737) Աստղեքտաւում: Ա. Ն.



Որսորդական աշխարհ, գործ նկարիչ Մինասի
(Անահատի ներկայ Թիւի 54րդ էջին մէջ հրատա րակուած որմնամկարին վարի մասը՝ մեծցուած)

մի մէջ ծնունել և մեծացել է նկարիչ Մնասը և ինչպէս Պետրոսի ապարանքն էլ 1640-50ական թուականներին նկարազարդել:

Արուեստի կրակը սրտիս՝ քայլերս ուղղում եմ Նոր-Ջուզայի Փոքր-Մէյդան թաղը, ապա ծառազարդ ուղիով առաջ շարժուելով, ներս եմ մտնում պատմական ապարանքը և կանգ առնում նկարչական մի մեծ և զեղեցիկ սենեակում: Դա ինչպէս Պետրոսի ապարանքն է, որ իրենք հարկւր յիսուն տարուայ անցեալ ունի: Առանձին յուզումով եւ յափշտակութեամբ դիտում եմ զեղարուեստական նկարները: Այնտեղ, որմերի վրայից, նայում են նկարչական արուեստի երկու տարբեր ժամանակաշրջանի դպրոցներ և ոճեր: Բարձրաչէն առաստաղի և արեւելեան ու արեւմտեան որմերի վերեւի մասերում վրձնուած նկարները պատկանում են Շահ-Աբրահա երկրորդ արքայի պատմաշրջանին: Իրանցից շատերը, որ զուտ գծանկար են եւ վրձնուած են միայն կապոյտ երանգով,

գրաւում են ուշադրութիւն իրենց՝ զեղարուեստական նրբութեամբ, գոյների և գծերի հրաշալի ներդաշնակութեամբ և մանաւանդ ուժեղ դիմամիկայով, նկարներ, որոնք ցայտուն գաղափար են տալիս սէֆէվեան շրջանի նշանաւոր հայ նկարիչ Մինասի ստեղծագործական խոշոր ձիրքի, նրա ուրոյն ոճի ու արտայայտութեան ձեւի մասին:

Բնորոշ են մանաւանդ Մինասի մանրանկարները, որոնք բոլորովին տարբեր շունչ, ոգի ու ոճ ունեն և ամենեւին նման չեն իրանեան թէ՛ Հին և թէ՛ Նոր նկարներին: Նկարիչը նկարել է միանգամայն Նոր ոճով և արուեստագիտութեամբ: Այնտեղ նա ո՛չ միայն կենտրոնացել է մանրանկարների արտաքին ձեւի վերայ, ո՛չ միայն խորացել է նկարների բնորոշ մանրամասնութիւնների մէջ, այլ և տիպերի ոգու, կենդանութեան և մանաւանդ շարժումի վրայ: Այնտեղ գծերը պարզ են, հասկանալի և ուժեղ: Դէմքերն ունեն իրենց տուեալ արտա-



Արեւելեան բնանկար, գործ նկարիչ Միքայի (Սնահաթի ներկայ Քիւի 52րդ էջին մէջ հրնատա-
րակուած որմնանկարին վարի մասը՝ մեծցուած)

յայտութիւնը, տիպերն իրենց շարժումն ու թա-
փը, տեսարաններն՝ իրենց կենդանութիւնը :
Կան նկարներ, որոնք կատարելապէս արեւելե-
կան են եւ կատարելապէս հարազատ: Ահա նը-
րանց պատկերը:—

Պատերազմը. — Միքայի ստեղծագործու-
թիւններէ մէջ ուրոյն տեղ է գրաւում սենեակի
դրան ճիւղ դիմաց, լայն պատերի վերեւի ճա-
կատին, նկարուած պատերազմական տեսարա-
նը: Դա գոյներէ ու զօծերի կատարեալ ներդա-
նակութեամբ եւ եզակի շարժունութեամբ վըր-
ձինուած մի մեծ ու ամբողջական շարադրու-
թիւն է, ուր իշխում են յատկապէս մուգ-կար-
միր եւ մուգ-դեղին գոյները: Այնտեղ, պատի
վրայից, նայում են արեւելեան դիմագծեր՝
արտայայտիչ աչքերով: Ձիերի յաղթական
վազքը, ձիաւոր նիղակաւորների կեցուածքը,
մկանների լարումը, յարձակումը, դիմադրու-
թիւնը, հոգեկան ապրումները նկարիչը կարո-

ղացել է պատկերաւորել պարզ, արտայայտիչ
և զեղարուեստական կառուցուածքով, միմեանց
ներգաշնակել ու կերտել է հերոսական-դիւ-
ցազնական մի ամբողջ համապատկեր, որը դի-
տում էք լարուած հաշնացքով եւ ցայտուն դա-
ղափար կազմում նկարչի ստեղծագործական
խոշոր ձիրքի մասին: Ժամանակը, տարաբա-
տաբար, գործել է իր աւերները: Այդ մեծ եւ
զեղեցիկ կօմպօզիցիան մաշուել, եղծանուել եւ
զրկուել է իր հարազատ գեղեցկութիւնից:

Արեւելեան քնանկար. — Սէֆէվեան նկար-
չութեան մի գեղեցիկ ստեղծագործութիւն է
Միքայի արեւելեան պատի վերեւում նկարած
իրանական կեանքը պատկերացնող տեսարանը:
Այդտեղ, ամբողջ պատը վըրձինուած է միայն
կապոյտ գոյնով: Դա մի իրապատական նկար
է եւ պատկերում է գլխաւորապէս Իրանի բը-
նութիւնը, տիպերը եւ կենդանական աշխարհը:
Տեսնում էք միմեանցից հեռու ընկած, հինգ-

վեց յարկանի ու եւրոպական ոճով կառուցուած տնակներ, ծառեր, ծաղիկներ, թռչուններ, կենդանիներ, ձիաւորներ, կիներ, աշջիներ: Նկարն իր ամբողջութեամբ միապոյն մանրանկար մի պանօրամա է, ուր եւ կեանք կայ, եւ համակ շարժում, եւ սքանչելի ներդաշնակութիւն, եւ արուեստ: Որմանկարն ունի մօտերկու հարիւր եօթնաստուն տարուայ պատմութիւն եւ շնայած իր հնութեան, պահել է իր հարազատ գեղեցկութիւնը: Կարելի է ասել, որ նկարիչ Մինտսի ամենագեղեցիկ եւ ամենապերճաւորս ստեղծագործութիւններից մէկն է:

Որստղապամ աշխարհ — Աւանմին ուշադրութեան արժանի է նաեւ արեւմտեան պատի վերեւի մասում, նոյնպէս կապոյտ երանգով, Կծուած որսորդական տեսարանը: Որմանկարն իր պարզութեան մէջ խտացնում է խորութիւն եւ գեղարուեստական նրբութիւն: Այնտեղ, սարերի ձեւերով արտայայտուած, Արեւելքի բնութեան մէջ ձեր ուշադրութիւնը գրաւում են վայրենի դազանները եւ հետապնդող ձիաւոր որսորդները: Որմանկարի որոշ մասերը, տարաբախտաբար, մաշուել են եւ կորցրել իրենց հարազատ գեղեցկութիւնը:

(Մնացեալը յաջորդով)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ